Արձանագրություն N 2

<<ՀՀ ՎԿ-ԷԱՃԾՁԲ-2026/3>> ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի

ք. Երևան 11 մայիսի 2026թ.
Ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Վ. Գևորգյան

Հանձնաժողովի անդամ՝ Ս. Լպուտյան

Հանձնաժողովի անդամ՝ Լ. Ադամյան

Քարտուղար՝ Ն. Պետրոսյան

1. <<ՀՀ ՎԿ-ԷԱՃԾՁԲ-2026/3>> ծածկագրով էլեկտրոնային աճուրդին ներկայացված հայտերը eauction.armeps.am համակարգում /այսուհետ, Համակարգ/ բացվել են 2026թ. մայիսի 11-ին, ժամը 11:00-ին:

2. Հանձնաժողովը արձանագրեց, որ հրավերի վերաբերյալ հարցումներ չեն ստացվել:

3. Հանձնաժողովը արձանագրեց, որ հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի վերաբերյալ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ստացվել:

4. Էլեկտրոնային հակադարձ աճուրդը համակարգում սկսվելու է 2026թ. մայիսի 12-ին, ժամը 11:00-ին:

5. Հանձնաժողովի հաջորդ նիստը տեղի կունենա աճուրդն ամփոփվելուն հաջորդող աշխատանքային օրը՝ 2026թ. մայիսի 13-ին, ժամը 11:00-ին:

<<ՀՀ ՎԿ-ԷԱՃԾՁԲ-2026/3>> ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի շարունակություն

ք. Երևան 13 մայիսի 2026թ.
Ժամը՝ 11:00

6. <<ՀՀ ՎԿ-ԷԱՃԾՁԲ-2026/3>> ծածկագրով ընթացակարգի հակադարձ աճուրդը սկսվել է Համակարգում, 2026թ. մայիսի 12-ին, ժամը 11:00-ին:

7. Սահմանված ժամկետում էլեկտրոնային աճուրդ ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցներ.

N	Մասնակցի անվանումը	Տվյալները
1	ՀՈՍՅԱՆ ՆԱՐԵ ԳԱԳԻԿԻ ԱՁ	Արարատի մարզ, ք. Մասիս, հեռ. 044 59 58 50
2	«ԼՈՌԵ ԹՐԱՎԵԼ» ՍՊԸ	ք. Երևան, Չարենցի 4, հեռ. 077 753 753

8. Մասնակիցի կողմից առաջարկված գինը հետևյալն է.

չափաբաժնի համարը	Գնման առարկայի անվանումը	Չափման միավոր	Քանակը	Գնման առարկայի նախահաշվային գինը	Մասնակցի անվանումը և աճուրդի արդյունքում ներկայացված վերջին գնային առաջարկը (ՀՀ դրամ)*			
					ՀՈՍՅԱՆ ՆԱՐԵ ԳԱԳԻԿԻ ԱՁ		«ԼՈՌԵ ԹՐԱՎԵԼ» ՍՊԸ	
					Գնային առաջարկը		Գնային առաջարկը	
					առանց ԱԱՀ	ներառյալ ԱԱՀ	առանց ԱԱՀ	ներառյալ ԱԱՀ
1	սեմինարների կազմակերպման ծառայություններ	դրամ	1	1360000	1346280	-	1359888	1631865.60

*Եթե մասնակիցը ԱԱՀ վճարող չի հանդիսանում, ապա լրացվում է միայն ''առանց ԱԱՀ'' սյունակը

9. Համակարգում «ԼՈՌԵ ԹՐԱՎԵԼ» ՍՊԸ-ի կողմից՝ ներկայացված հայտը աճուրդի ամփոփումից հետո համակարգը ավտոմատ մերժել է, քանի որ ներկայացված գնային առաջարկը գերազանցել է գնման առարկայի նախահաշվային գինը:

10. Էլեկտրոնային աճուրդն ամփոփվելուց հետո արձանագրվեց, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակից է հանդիսանում ՀՈՍՅԱՆ ՆԱՐԵ ԳԱԳԻԿԻ ԱՁ-ն:

11. Հանձնաժողովը որոշեց գնահատել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի հայտում առկա փաստաթղթերը, որոնց գնահատման արդյունքում արձանագրվեց, որ ուղարկված հայտը Համակարգում կցվել և ներկայացվել է պատշաճ, սակայն բացակայում էր Դիմում-հայտարությունը ստորագրող անձին տրված լիազորագիրը:

12. Հանձնաժողովը որոշեց 1 աշխատանքային օրով կասեցնել նիստը և ՀՈՍՅԱՆ ՆԱՐԵ ԳԱԳԻԿԻ ԱՁ-ին առաջարկել մինչև կասեցման ժամկետի ավարտը Համակարգի միջոցով շտկել արձանագրված անհամապատասխանությունը:

13. Հանձնաժողովի հաջորդ նիստը տեղի կունենա 2026թ. մայիսի 15-ին, ժամը 11:00, ք. Երևան, Կառավարական տուն 3 հասցեում, 615 աշխատասենյակում:

<<ՀՀ ՎԿ- ԷԱՃԾՁԲ-2026/3>> ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի շարունակություն

15 մայիսի 2026թ.
Ժամը՝ 11:00

14. Հանձնաժողովն արձանագրեց, որ սահմանված ժամկետում ՀՈՍՅԱՆ ՆԱՐԵ ԳԱԳԻԿԻ ԱՁ-ի կողմից շտկվել է արձանագրված անհամապատասխանությունը և համակարգով ներկայացվել է լիազորագիրը:

15. Հանձնաժողովը որոշեց ՀՈՍՅԱՆ ՆԱՐԵ ԳԱԳԻԿԻ ԱՁ-ի հայտը գնահատել հրավերի պահանջներին համապատասխանող, ուստի ներկայացված հայտի հիման վրա, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված <<Էլեկտրոնային աճուրդի իրականացման>> կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետը, << ՀՀ ՎԿ-ԷԱՃԾՁԲ-2026/3>> ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշեց ընտրված մասնակից ճանաչել ՀՈՍՅԱՆ ՆԱՐԵ ԳԱԳԻԿԻ ԱՁ-ին:

16. << Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

17 Ընտրված մասնակցի հետ գնման պայմանագիրը կնքվելու է օրենսդրությամբ սահմանված կարգով:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ ---------- Վ. Գևորգյան

Հանձնաժողովի անդամներ՝ ---------- Ս. Լպուտյան

---------- Լ. Ադամյան

---------- Ն. Պետրոսյան

Քարտուղար՝